

ճային ճշմարտութիւններն այն հրաշալի շրջ-
թանոյ որ ներկայացնում է մարդուս առաջ
Աստուծոյ աշխարհին բարեգրման և մարդուս
բարձրացման և բարեկարգման համար կատա-
րած սքանչելի գործը:

Արդէն պատրաստութիւններ են տես-
նուում ներկայ 1900 թուականին սկսե-
լու տպագրութիւնը: Տպագրուել և բաժա-
նուել են թեմական և հոգեւոր տեսաններին և
նրանց ստորագրեալ գործակալներին անգոր-
բազրեր բաժանորդագրութեան համար Մ.
Աթոռի տպարանի կնքով դրօշմած, ժապա-
ւինած և տպարանի տեսչի ստորագրութեամբ
վաւերացած:

Ս. Դիրքը ճաշակով և մաքուր տպագրե-
լու համար պէտք է հրաւիրուի Եւրոպայից
տպարանական գործերին մասնագէտ հմուտ
տպագրիչ:

Տպագրուելի Ս. Դիրքը լինելու է պատ-
կերազարդ և պատկերները առանձին յանձ-
նարարութեամբ պէտք է պատրաստուին Դեր-
մանիայում:

Ս. Վեհի բարեհաճ անօրէնութեամբ
բաժանորդագրինը նշանակուած է 5 ա. որով
տպագրութեան և թղթի անհրաժեշտ ծախ-
քերը զօւարթ թէ կարելի լինի ծածկել:
Սակայն Ս. Հայրապետը աչքի առաջ ունի
Ս. Դրքի տարածման բարոյական օգուտը,
որի մէջ իւր միակ մխիթարութիւնն է տես-
նում, իսկ բաժանորդագրութիւնը միայն թե-
թեւ նպաստ պէտք է լինի շքեղ տպագրու-
թեան մեծ ծախսերի համար:

Պարտաւորութիւն է զրվում Ռուսա-
հայոց բոլոր եկեղեցիների և հոգեւոր պաշ-
տօնեաների վրայ մի մի օրինակի բաժանորդ
գրուելու: Բարոյական պարտք է զրվում նաեւ
կարող ազգայնոց վերայ իրենց կարողութեան
չափով Ս. Դրքի մի քանի օրինակների բա-
ժանորդ գրուելու: Երանց կողմից ձրիապէս
կը բաժանուին աղքատ եկեղեցիներին և չքա-
ւոր հոգեւոր պաշտօնեաներին:

Թարգմանօք խնդրվում է նաեւ բոլոր
թեմ. և հոգ. տեսաններին, գեր. առաջ-
նորդներին, բարձրապատիւ փոխանորդներին
և արժ. գործակալներին փութալ բաժանորդ-
ներ գանելու գործը առաջ տանելու Յատկապէս

խնդրում է նիւթական հարստութեամբ ճո-
խացած ազգայիններին փութալ իրենց նիւ-
թական օժանդակութեամբ նպաստել այս
Աստուածահաճոյ մեծ գործին:

ՏԵՍՈՒՉ ՏՊ. ԱՇՈՏ ՎԱՐԿԱՊԵՏ

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

Պետերբուրգում դեկտ. 14-ին նախարարյի
նիւոն եպիսկոպոսի նախագահութեամբ գումա-
րուեցաւ «Կրօնական լուսաւորութիւն» տարածող
ընկերութեան դահլիճում վերջին «հովուական»
ժողովը: Մոսկուայից Պետերբուրգ էր եկել Յով-
սէփ քահանայ Փուդել այդ ժողովի համար իւր
պատրաստած «Եկեղեցական կարգապահութիւնը
որպէս կրօնական կեանքը բարձրացնող միջոց»
վերնագրով դատախօսութիւնը կարգաւորու: Այս
շարադրութեամբ հ. Յովսէփը նախնկարադրեց ժո-
ղովրդի բարոյական կեանքի խիստ անկումը: անկ-
ման պատճառները և ապա այն միջոցները, որով
եկեղեցին ժողովրդի մէջ կրօնական կեանքը նորից
կենդանացնել կարող է: Հ. Յովսէփի ասելով՝
Ռուսաց մէջ գեղեցում բարոյական անկումը
յետին ծայրն է հասել, այս ցաւալի իրողութիւ-
նը ապացուցանում է եղեռնագործութեանց վի-
ճակագրութեամբ: Դատախօսն այդ երեւոյթը բա-
ցատրում է քաղաքացիական և ընկերական կեան-
քի պայմանների փոփոխութեամբ: որով հեղինա-
կութեան և առաջնորդելու հնադարեան դադա-
րակները անգոր են դարձել ներգործելու ժողո-
վրդի վերայ, Եկեղեցուն մնում է այժմ որպէս
միակ միջոց մարտ մղել այդ երեւոյթի դէմ խրա-
տելով կամ պատժելով յանցաւորներին: Հ. Յով-
սէփ կարծում է թէ անհրաժեշտ է եկեղեցու մէջ
վերակենդանացնել առաջին դարերի ապաշխա-
րանաց միջոցները: Բանցաւորին հարկաւոր է
նախ խրատել և եթէ չզգուշացաւ, հրապարա-
կային ապաշխարանաց ենթարկել և նոյն իսկ
հարկաւոր դէպքում նզովել կամ մերժել եկեղե-
ցուց: Իւր միտքը բացատրելու համար հ. Յով-
սէփ պատմական մի տեսութիւն է անում հին
եկեղեցու ապաշխարութեան կարգերի վերաբե-
րութեամբ՝ օրինակներ բերելով Պոդսո առաքեա-
լից մինչև Տերտուղիանոս և ապա Ե. դարու
եկեղ. հայրերը: Ռուսաց եկեղեցու մէջ նոյն իսկ
մարմնական պատիժներ են գործադրուել յանցա-
ւորներին համար: Վերջին 25 տարուայ ընթաց-
քում ապաշխարանաց միջոցներն թուլանալով
ընկել է և ժողովրդի բարոյականութիւնը: Հռե-

տարբեր իւր ճառը վերջացնում է այն եզրակացութեամբ, թէ պէտք է վերականգնել կարգապահական միջոցները, թուլութիւնը պակասակել, բայց խստութիւններով չզրգուել յանցանքներին ուղղելու փոխանակ: Նիկոն եպիսկոպոսի առաջարկութեամբ բոլոր ժողովականները ոտքի կանգնելով շնորհակալութիւն յայտնեցին հ. դասախօսին իւր գովելի աշխատութեան համար:

Մեր կողմից կաւեւացնենք, որ այս հարցը յուշում է ոչ միայն Ռուսաստանում Օրթոդոքս եկեղեցու մէջ, այլ և Գերմանիայում՝ բողոքականներին մէջ, Բայց դժուար թէ նոր դիմին կաթիլ լինի հին տիկն մէջ պահել: Նոր ժամանակը ապշխարութեան և դատախարակութեան նոր միջոցներ է պահանջում: արտաքին պատիժներով անկարելի կլինի մի ժողովուրդ կրօնական և բարոյական դարձնել, Կրօնը և նորանից բխած բարոյական կեանքը, որտեղ գործ է. միջոցներ պէտք է որոնել ժողովրդի սերտը՝ կրօնական զգացման և բարոյականութեան աղբիւրն ազնուացնելու:

— Կրօնական լուսաւորութեան ընկերութիւններ կան ոչ միայն Պետերբուրգում, այլ և Կիււում և Մոսկուայում: Այդ ընկերութեան նպատակն է ժողովների մէջ կրօնական-եկեղեցական խնդիրներ յուղել և լուսարանել: Ընդհանրաբար Մոսկուայում գումարում մի ժողովում հարց էր դրաթել, թէ ի՞նչպէս կարելի է ն. Կաթարանը մտայնել անել ժողովրդի գրագէտ դասին: Ժողովականներից մէկը որպէս փորձ ներկայացրել է Մատթէոսի Ե. գլուխը բացատրութիւններով: Ժողովականները այն եզրակացութեան են հասել, թէ բացատրութեան ժամանակ պէտք է դրական ուղղութիւն բռնել և ոչ լիճաբանական: Ներկորդ պէտք է յաճախ մէջ բերուին Ս. Հարց բացատրութիւններ և հոգևոր երգեր, որով ամենագեղեցիկ կերպով կպարզուի աւետարանի իմաստը:

— Կիևի հոգևոր ճեմարանի տարեկան հաշուեց երևում է, որ 1898/9 ուսումն. տարուայ սկզբում ճեմարանը ունեցել է 19 պատուաւոր անդամ, որոնցից չորսը նոյն տարուայ ընթացքում մեռել են, նոր անդամներ ընտրուել են 5 հոգի և տարուայ վերջին էլ դարձեալ 4 հոգի:

Այս նոր ընտրուողների մէջ նշանաւոր են 1) Սրբ. Անտոնիոս Պետերբ. մեաթոպոլիտ վարդապետ (ДОКТОРЪ) եկեղեցական պատմութեան, որ երկար տարիներ գործել է դպրոցական ասպրիդում իբր աստուածաբանութեան դասաւուս: 2) Սրբ. Վլադիմիր Մոսկովայի մեաթոպոլիտը և 3-ը) Գոստրմայի եպիսկոպոս սրբ. Վլաստերին՝ վարդապետ աստուածաբանութեան:

— Նոյեմ. 2-ին Գատչինում կազմուել է

«տար ազգաց մէջ աւետարանը տարածող քարոյչներին» ժողովը, ուր վերոտին հաստատուել է՝ անցեալ տարի Սամարայում արուած որոշումը. հրատարակել մի պարբերական թերթ, որ տեղեկութիւն տար քարոյչութեան գործի մասին, և ուր ամէն ոք կարողանար հաղորդել իւր դիտողութիւնները. թերթը իրարից անկախ գործող անձանց մէջ հաղորդակցութեան որպէս կապ ծառայէր և ազգագրական հանգէս դառնար այն ժողովրդոց համար, ուր Քրիստոսի աւետարանը քարոյչում է:

— Մայրաքաղաքի հոգևորականութիւնն իւր 8-րդ նիստում լսեց մի հետաքրքիր զեկուցում՝ Օրլէանի եպիսկոպոսի Փ. Գրիպանլուի «Քարոյչական խորհրդածութեանց» մասին, որ կազմել էր անդամներից մէկը: Յրաձեռնացի եպիսկոպոսի այս աշխատանքը թարգմանուած է ռուսերէն և մեծ ընդունելութիւն գտաւ ժողովականների կողմից իբր շահաւէտ և կրթիչ գործ՝ մանաւանդ քարոյչներին համար: Յատկապէս ուշադրութեան առնուեցաւ այն միտքը, թէ քարոյչը պէտք է ուսումնասիրէ իւր ունինդիւրների հոգին և միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ այդ կէտը ճանաչել այսուհետեւ քարոյչական ընկերութեան առաջին խնդիր և այդ ուղղութեամբ նիւթեր մշակել և ներկայացնել ապագայում:

— Ռուսաստանի սահմանագլխի մի քանի կեդրոններում, ուր օրթոդոքս բարեկարգ եկեղեցիների կարել է զգացումում նոր եկեղեցիներ են կառուցանում կամ եղածները բարեկարգում և նիւթապէս ապահովում: Այսպէս մի նոր եկեղեցի է կառուցուել Վարչաւայում, որ եկեղեցական ճարտարապետութեան հալայական մի գործ է համարուում: Ներքին մասը անստատեաների վիշալութեամբ մեծ տպաւորութիւն է անում: Իրաւամբ այս տաճարը համարուում է Ռուսաց ժողովրդի և պետութեան սնունդ վայել մի գործ, և եկեղեցական ճարտարապետութեան փառաւոր մի կոթող:

— Մինտոնների յանձնաժողովի խորհրդով, որ Բարձրագոյն հաստատութիւն դասաւ հսկա. 26-ին Վարսի առաջ տաճարը Արաւ Բագրատունու շինած նոյակարգ կաթողիկէս 104 դեռեալին կալումած ստացաւ: Նորա եկամտով իւր կարիքները հոգալու համար: Աւարտուելու վրայ է Գորա—Արտուրի (2ինաստանում) եկեղեցու շինութիւնը:

— Մի քանի օր առաջ Կոստանդնուպոլսի Յունաց պատրիարքը ստացաւ Սուլթանի մի

կրակէն: որով Մանասիրում հոտատուում է մետրոպոլիտ յոյն եպիսկոպոս:

— Աղեքոսանդրեայի պատրիարքական ընտրութեան համար Եգիպտոսի յոյն համայնքը ընտրել է իւր մէջից 117 պատգամաւոր: Գեհ. 23-ին առաջին նստում 75 հոգի ընտրուել են յիշեալ պատգամաւորներից: Եպիսկոպոսների ցանկ կազմելու համար, որոնք 45 հոգեւորականների հետ խառն ժողով են կազմել: Նախ քան վերջնական ընտրութիւնը՝ ցանկը պիտի ներկայացուի կառավարութեան: որ ըստ կամայ կարող է հեռացնել ցանկից իւր չուղած եպիսկոպոսի անունը: որից յետոյ արդէն բոլոր հոգեւոր և աշխարհական պատգամաւորները խառն ժողով են կազմելու վերջնական ընտրութեան համար: Ամենից մեծ հաւանականութիւն ունի յաջող ընտրութեան համար Նազարեթի մետրոպոլիտ Փոտիոս եպիսկոպոսը՝ յայտնի պերճախօս և լեզուազէտ ուսուցիչ: արքայ: Գրական լեզուների մէջ:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

— Нов. Время թերթի ակնարակն թղթակցի նկարագրութիւնից Ս. Գրաների բացման հանդիսի մասին հետեւեալն ենք քաղում: Այդ հանդիսով սկսում է պաշտօնապէս յորելեանական տարին: Հանդիսին ներկայ էր իննսուներեք Լեւոն Ժ.Պ. պապը: հակառակ նորա անձնական բժիշկ Լուպպոնու յորդորներին Ս. Պետրոսի եկեղեցին զորդարուած չէ: միայն միջին պատշգամբներից մէկից կախուած է պապի զինանշանը: Ատիճանները՝ բռնած է պետական ստրիկանների մեծ քաղմութիւն կարգ ու կանոն պահպանելու համար: իսկ տաճարի մէջ հօկում են պապական ստրիկանները: Մուտքը ամսակիով է: Պապական աթոռը զարդարուած է սպիտակ մետաքսեայ կտորով: որ անդնադործած է ոսկէ ծաղիկներով: Նորու վերայ կանգնեցրել են շքեղ ամպնոյնին զորդարուած պապական ոսկեպատ զինանշաններով:

Հանդիսականների համար ամբիոններ են պատրաստուած: մէկը Հռոմէ. պատրիկների և արքայական աներից եկած հիւրերի համար: միւսը մալթական առօրեաների, քաղաքագիտական խմբին պատկանող անձանց, և հասարակ հրաւիրեալների համար: Միջնադարեան իսպանական հագուստներով զարդարուած պարսկներ ընդունում են հիւրերին և իրենց անցն առաջնորդում: Ժամը 10-ին ամբիոնները լցուած են: Ներկա սպասելուց յետոյ վերջապէս լուում է փողի ձայնը և երեւում է թափորը հետեւեալ կարգաւորութեամբ. նախ բազմաթիւ դանդաղ կարգերի պատկանող արեղաններ մոմերով և խաչերով ընթանում են

առաջից: ապա պապի պալատականները: Ս. Պետրոսի կանոնիկոսները: Եպիսկոպոսները: պատրիարքները: կարդինալները և ապա պապը բազմած քարձր դահուորակի վերայ ջալլամի և սիւրմարդի փետուրներից շինած հովհարների մէջ: Փողերը նուազում են: իսկ պապը դողդոջուն ձեռքերով օրհնում է ժողովրդին: Պատգարակը իջնցնում են աթոռի առաջ. ամբիոնի վերայ եղած մարդիկը ծունկ են չորում: պապը ցած է իջնում պատգարակից և նստում է աթոռի վերայ: Հինգ ըոպէի չափ հանդուսանալուց յետոյ՝ նա իջնում է Աթոռի առտիճաններից և մօտենում է ոսկի դռներին: Կարգինալ Սերաֆինոյ Վանուտելին մատուցանում է ոսկէ մուրճը: որով պապը բաղնում է ոսկի դռներին լատիներէն երգելով. «բացէք ինձ դռուն արդարութեան»: Չայնակցում է Սերաֆինեան մատուռի երգեցիկ խումբը: Ներք անգամ բաղնելուց յետոյ՝ բացւում են դռները և Ս. Պետրոսի կանոնիկոսները սպունդով սրբում են դռները: Պապը ծունկ է խոնարհում: իսկ մէկը երգում է. «գեղ օրհնեմք Առաւուած»: Պապը կանգնում է առանց օգնութեան և տաճար մանում: Նորան հետևում են կարդինալները: պատրիարքները: Եպիսկոպոսները և ապա հրաւիրեալները: Գործը առանց աղմուկի չէ անցնում: մի կողմից աղաղակում են «կեցցէ թաղաւոր պապը»: իսկ միւս կողմից «կեցցէ թաղաւոր Հումբերտը»:

Ապա թղթակիցը իւր կողմից աւելացնում է: որ կղերականները քաղաքական մեծ յոյսեր են կապում այս յորելեանական տարուայ հանդէսների հետ: Սրանց հակառակ աղտոտամիտները կամենում են ամեն զիւրդանոյ Բրունոյի նահատակութեան 400 ամեակը:

Յաւալի երեւոյթ է. քրիստ. ամենամեծ եկեղեցու վարիչները երբ պէտք է հասկանան: որ Գրիգորիոս սրբերի թաղաւորն է: իսկ եկեղեցու կոչումն է միայն մարդկութեան սիրտն ու հոգին կրթել և ոչ այլ ինչ:

— Կաթոլիկ եկեղեցին մի մեծ կորուստ ունեցաւ յանձին Մեացի Գլէկ եպիսկոպոսի: որ վախճանուեցաւ հոկտ. 28-ին: Նա ծնուել էր 1824 թ. իւր ուսումը աւարտելուց յետոյ՝ քահանայական պաշտօն ստացաւ Մեացի ս. Մարտին եկեղեցում: 1879 թ. Մեացի թեմական կառավարութեան պաշտօնեայ էր: որպէս գլխաւոր վիկար (իոխանորդ): 1881 թուին օգնական նշանակուեցաւ եպիսկոպոսին՝ նորա մահուանից յետոյ յաջորդ դառնալու իրաւունքով: 1886 թ. իսկական թեմակալ դարձաւ Մեացի եպիսկոպոսութեան: Կաթոլիկ թերթերը մեծ վշտով և համակրանքով են դրում հանդուցեալի մահուան մասին: Այսպէս Lorrain թերթի խմբագիրը: ի միջի այլոց հետեւեալն է

գրում. «Եթէ մենք եպիսկոպոսի մահուան վերայ աշխարհական տեսակէտով նայելու լինենք, պէտք է տեսնել, որ նորա հետ թաղում ենք և մեր անցեալի մնացորդները, որ նա իւր դաժնալի մէջ է առնում մեր լաւագոյն բարեքը, մեր թանկագին յիշողութիւնները, մեր ոտնակոխ եղած հակումները, մեր անօգուտ մընացած հաւատարմութիւնը, մեր մշտատե թախիժը, որ նորոգում է հանգուցեալի մահը, Բայց և այնպէս մի խօսքով կարող ենք տեսել, որ նա մեզ թողնում է հաւատ դէպի ապագան: Ապա թերթը յարում է, թէ ինչպէս Ֆլէկ եպիսկոպոսը հակուած էր 1870-ից առաջ փառաւոր, իսկ 1870-ից յետոյ ստորացած Փրանսիային, թէ նա որպէս ն. Մարտէնի քահանայ «միսիթարի» հրեշտակ էր իւր համայնքի համար, թէ ինչպէս նա իւր բոլոր էութեամբ հակուած էր դէպի կաթոլիկ Փրանսիան, իւր հայրենի երկիրը, որ երբեմն որպէս քրիստ. քաղաքակրթութեան գլուխ *la fille aimée de l'Eglise* — եկեղեցու սիրելի դուստր — տեսնուած էր կրում: Ֆլէկը Մեացի 97-երորդ եպիսկոպոսն էր, Հանգուցեալ եպիսկոպոսի յաջորդացուներէ մէջ յիշուած է ի միջի այլոց և Սաքսոնիայի արքայական տան անգամ երեւոտարդ իշխան Մաքս քահանան:

— Մոսկ իշխան քահանայի Փարիզում Մոնմարտի Յիսուսի սիրտ եկեղեցում պատարագ մատուցանելու առթիւ *Jugend* թերթը մի ոտանաւոր էր հրատարակել *Auf Gastspielen* վերնագրով: Դորմնով բողոքական թերթը պատարագը մի տեսակ թատրոն և պատարագիչը հիւր դերասան էր կամեցել նմանեցնել: Ի հարկէ մի անվայել ընթացք, Այս ոտանաւորը արտաուպել էր *Dresd. Rundschau*-ն և նորանից կաթոլիկ եկեղ. թերթը՝ աւելացնելով հետեւեալ նկատողութիւնը. «Մենք զարմանում ենք, որ Սաքսոնիայում արքայական ընտանիքի պատկանող մի իշխանի բարի գործը, թոյլատրւում է այդպէս արհամարհել և անդունել: Եւ յիշուի *Dresd. Rundschau* թերթի գէժ գառ սկսուեցաւ Վեհափառութեան պատուի դէմ յանցանք գործելու համար: Սակայն իրաւամբ բողոքական թերթերից մէկը նկատւում է, թէ իշխանը քահանայական աստիճան ընդունելուց յետոյ՝ կորցնում է իւր իշխանական արտօնութիւնները: Իշխան Մարսը նոյն տեսակ քահանայ պիտի նկատուի օրէնքի առաջ, ինչպէս բոլոր միւս քահանաները, Դատարանը համաձայն այս արդար նկատողութեան դատաստանի չենթարկեց *Dresd. Rundschau* թերթի խմբագրին:

— Կաթոլիկ և բողոքական եկեղեցիները թէ ինչպէս փոխադարձապէս հակում են միմեանց վերայ և ինչպէս կատածանքով են վերաբերւում միմեանց, երևում է հետեւեալ գէտքից: Արի-

դիակոն գոհարը Նեոյքեբուր N. Sachs. Kblt-ում մի տեղեկութիւն էր հաղորդել, որպէս թէ Դրեզդենի նկարչութեան թանգարանի յանձնաժողովը պետական հաշուով նոր պատկերներ գնելու ժամանակ առաջնորդում է դաւանաբանական տեսակէտներով՝ այսինքն ձեռք է բերում այնպիսի պատկերներ, որոնց նիւթը առնուած է կաթոլիկ եկեղեցու վանական կեանքից կամ Մարիամ Աստուածածնի և Սրբոց պաշտաման է վերաբերում: Իբրեւ փաստ մէջ է բերում այն իրողութիւնը, որ բազմաթիւ պատկերներ են գնուած նորերս, որ արդարեւ կաթոլիկ եկեղեցու կեանքից են վերցրած, այն ինչ միակ պատկերը, որ յիշեցնում էր Լութերի անձնաւորութիւնն ու կրօնական բարեփոխութեան (*Reformation*) ժամանակը, այսինքն Լութերի վէճը Էկեքի հետ, հանուած է թանգարանից և ուղարկուած Գրիմայի «իշխանական դպրոցի» դահլիճը զարգարելու: Այս դէպքը կաթոլիկ և բողոքական թերթերի վիճաբանութեան նիւթ դարձաւ. գործը հասու մինչև սաքսոնական Լանդտագը, ուր պատգամաւորներէց մէկը բացատրութիւն խնդրեց մինիստրից: Վատցգորֆ մինստրը ստիպուած եղու պաշտօնապէս բացատրել, թէ նկարչութեան թանգարանի համար պատկերներ գնելիս, արքայական յանձնաժողովը երբէք դաւանական տեսակէտներով չէ առաջնորդուել, այլ միայն գեղատիւրական: Եթէ կատած կայ այդ մասին, նա ստիպուած կլինի թողնել իւր պաշտօնը: Յիշեալ պատկերը ընծայուած է «իշխանական դպրոցի»-ն, որովհետեւ գեղարուեստական բարձր արժանիք չունի նկարչական թանգարանի փառքին վայել: «Կամենայիք հեռացնել այն բոլոր պատկերները, որոնք որպէս թէ կաթոլիկութեան գաղափարն են արծարծում, պէտք է պատկերների լաւագոյն մասը գուրս հանելնը»: Արդարեւ Դրեզդենի հռչակաւոր թանգարանի լաւագոյն պատկերները նկարչութեան դատական շքանին, ուրեմն և կաթոլիկութեան են պատկանում: Յատկապէս իտալական դպրոցի լաւագոյն ներկայացուցիչները ծաղիկ են պապական աթոռի հովանու տակ: Դրեզդենի թանգարանումն է գտնուում Բաֆայէլի հանրածանօթ Աստուածածինը, Բողոքականութիւնը նոր է ծաղկում դեռ ևս կրօնական պատկերներով: Քրիստոնէական նկարչութեան անցեալի՝ դատական շքանի փառքը կաթոլիկութեանն է պատկանում:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵՎ ԵԿԵՍՒ.

Բողոքականութեան հոգար ձեռաւոր և ցրուած հաւատակցների (Դիսպոտայի) համար.— Այն ինչ որ մենք «հեռաւոր և ցրուած հաւատակից»

բառերով արտայայտեցին, Գերմանացիք յունաբէնից առնելով մի բառով դիտարկեցին անուանում: Ե. Կապարանի մէջ այս բառը դործ է ածուած Ա. Պետր. Ա. 6 համարում որ մեր նախնիք ձեռքի հետքով են թարգմանել: Բայց գերմանացու դիտարկումն համապատասխան չէ ձեռքի հետքին: որովհետեւ դիտարկում է նորա աչքում և գերմանական պետութեան այն մասերը, ուր բողոքականութիւնը իշխող է: Այդպիսի նահանգներից մէկն է Էլզաս — Լոթարինգիան, ուր բողոքականութիւնը թոյլ է կաթոլիկութեան համեմատութեամբ: Այդպիսի նահանգների, ինչպէս և օտար երկրների և գաղութների հաւատակիցների համար բողոքականութեան կեդրոնները հրեաներ են դործ դնում նուիրարեութիւններով, եկեղեցիներ կառուցանելով, քրիստոնէական հաւատաւորութիւններ հիմնելով թե և թիկունք լինել և օգնել ոչ միայն նոցա գոյութիւնը պահելու, այլ և մարտ մղելու կաթոլիկութեան դէմ:

Այսպէս նոյն նահանգի «Բողոքական ազատամիտ ընկերութիւն» բարեգործական նպատակով մի անալիստիկ կազմեց հոկտ. 23—26, ուր 10500 մարկ գումար արդիւնք մնաց ընկերութեան օգտին: Իսկ հոկտ. 21-ին նոյն ընկերութեան ձեռներեցութեամբ մի ժողով գումարուեցաւ, ուր պատուիր Կուկը մի գասախօսութիւն կարդաց Աուգվիլի Գէորգիանի կրօնի փիլիսոփայութիւնը և նորա առնուութիւնը ներկայ աստուածաբանական գիտութեան հետ լեւնադրով:

— Բայց առանձին ուշադրութեան արժանի է բողոքականութեան տարած խնամքը պատանիների քրիստոնէական կրթութեան վերայ: Ինչպէս յայտնի է ուսումը պարտադիր է ամբողջ Գերմանիայում, բայց գաղութական ուսումը աւարտելուց յետոյ պատանիները կրօնական րոշ ուսում ունին ձեռք բերելու պատարի առաջնորդութեամբ՝ համայնքի անդամութեան մէջ ընդունուելու համար: Գրուած մի խորհրդի մնացորդն է այդ բողոքականութեան մէջ: Մի և նոյնը կայ և կաթոլիկ եկեղեցու մէջ, եպիսկոպոսը շքուած է իւր թեմը և օժման խորհրդի համար պատրաստուած պատանիներին օժում և համայնքի մէջ ընդունում: Մեր եկեղեցին միջոտութեան և օժման խորհուրդը միասին է կատարում: Յրուած համայնքները, երբեմն մի քանի ընտանիք այստեղ և մի քանիսը այլ տեղ, դիւրութիւն չունին իրենց մանուկներին հարկաւոր չափով հրահանգելու քրիստ. ուսման մէջ: Որովհետեւ այդ դործը կատարում է պատարը, իսկ նա միայն կեդրոնական համայնքներում է ապրում: ուստի և մեծ դժուարութիւն է առանձնակ վերստերով երեխաներին ուղարկել պատարի մօտ քրիստ. ուսումն սովորելու համար: Այդ պատճառով յարմարութիւն կեդրոններում

գաղութներ են շինուած միմիայն քրիստ. ուսման մէջ հրահանգուելու համար: Այդպիսի մի հաստատութիւն Գուստաւ-Ադոլֆ ընկերութեան օգնութեամբ հիմնուել է Լիքսայում, ուր շքուականներից 225 պատանիներ են հաւաքուած ուսանելու: Որպէս զի հեռուոր վայրերի պատանիները չզրկուին բողոքականութեան համար անհրաժեշտ համարուած այդ հրահանգից, յիշեալ հաստատութիւնն ունի և դիշերօթիկների բաժին, որի ծախսերը նուիրարեութիւններով են հագացուած:

Հակապրոյիկական շարժումն Աւստրիայում. — Այս շարժումը, որի մասին «Արարատ»-ը տոնիք է ունեցել անգլիկութիւն տալու, ինչպէս երեւում է հետզհետէ ընդարձակ ծաւալ է ստանում: Այն ինչ Աւստրիայի բողոքականութեան հողերը վարչութիւնները շատ զգոյշ են և հեռու են պահում իրենց այդ շարժումը խրատութեամբ, բողոքական հպատակների և գերմանական կայսրութեան հաւատակիցների մէջ մեծ ոգեւորութիւն է նկատուած այս առթիւ: Այսպէս Առետիգ քաղաքում գերմանական Բոհեմիայի պատարների մի ժողով գումարուեցաւ նոյեմբ. 2-ին, ուր խորհրդակցութեան նիւթ դարձաւ Աւստրիական գերմանացիների մէջ Հռովմից դատուելու շարժումը: Ժողովը, որպէս սկզբունք բողոքական շարժումը զօրացնելու, հետեւեալ կէտերը որոշեց. 1. Յարմարաւոր տեղերում կանոնաւոր ժամապաշտութիւն կատարել (որովհետեւ բողոքականները քիչ են և ցրուած այստեղ այնտեղ, այդ պատճառով կեդրոններ են որոշուած աստուածապաշտութեան համար, ուր շքեղ պատարները քաւորում են). 2. Բազմացնել բողոքական ընտանեկան երեկոյթները (այսպէս են կուլում այն ոչ պաշտօնական հաւաքումները, ուր պատարը կամ կարող մի անձն խօսում, նուագում, երգում, մի խօսքով միասին վայելուչ և շինել ժամանակ են անցկացնում). 3) Ընդարձակել կրօնի դաստաւորութիւնը՝ նշանակելով առանձին դաստաւորներ. 4) Երեխաների համար առանձին ժամերգութիւններ կատարել, քարոզը և երգեցողութիւնը յարմարեցնելով նոցա հասակին: 5) Տեղական թերթերի մէջ պատշաճաւոր յօդուածներ գրել. 6) Աշխատել ազգել համայնքների ներկայացուցիչների և երեւոյթների վերայ, հետաքրքրութիւն և հակացողութիւն դարձնելով այս շարժման համար: 7) Որոշ ծրագրով և ուղղութեամբ գրքեր հրատարակել բողոքականութեան համար համակրութիւն դարձնելու նպատակով: 8) Մի մասնախումբ ընտրեց ժողովը, որ այս սկզբունքների համաձայն հետեւ գործին և պատրաստութիւն տեսնէ առաջնկայ գարնան նորից նոյն նպատակով ժողով գումար

րելու նկատելի է առհասարակ որ նորագործները թիւը միշտ աւելանում է: այսպէս նոյեմբ. 26 ճեպակցում 160 հոգի բողոքականութիւն է ընդունել. Բուդվոյսում գեկտ. 8-ին մի նոր բողոքական եկեղեցի է օրհնուել, իսկ Ս. Վայսում բողոքականները հոգ են ձեռք բերել նոր եկեղեցի կառուցանելու համար. Բողոքականութիւնը զօրանում է նաև Լոթրինգիայում. մի նոր եկեղեցի օրհնուել է գեկտ. 4-ին Նոյէանտում, մի ուրիշը շինուած է Մեցցի մօտ՝ որ 100000 մարդ պիտի նստի. Օգոստ. 15-ին Բոմբախում մի նոր եկեղեցի է հիմնարկուել:

— Հիւս. Գերմ. եկեղ. կեանքի մէջ վերջերս ընդհարումները անպակաս չեն: Գոցանից մէկն է գնեբալ սուպերինտենդենտը (Արքեպիսկոպոսի նշանաւորութեամբ մօտաւորապէս) Վաֆտանի գործը: Դր. Վաֆտանը Գերմանիայի նշանաւորագոյն եկեղեցականներից մէկն է ոչ միայն իւր գործնական, այլ և դիտնական աշխատութիւններով: Նշանաւոր են նորա երկերից մանաւանդ Auslegung des loth. Katechismus—Լութերի Քրիստոնէականի բացատրութիւնը և Der Christ. Glaube im geistigen Leben der Gegenwart—Քրիստոնէական հաւատը ներկայի հոգևոր կեանքի մէջ, զբերը: Նա իւր ուղղութեամբ խիստ օրթոդոքսներին (պահպանողական) չէ պատկանում, ինչպէս և նորա ազգական Բերլինի համալսարանի տեսական աստուածաբանութեան նշանաւոր ուսուցչապետ Վաֆտանը: Շոյլիքիս հակառակորդները օգտուելով այն հանգամանքից, որ նա Հէլզկիզ-Հոլշտայնում եղած Դանիացիների ճնշման համամիտ չէ և ամենևին հետամուտ չէ ոչնչացնելու Դանիական լեզուն և առանձնայատկութիւնները, կասկածելի են հռչակում նորա հայրենասիրութիւնն ու քաղաքական ուղղութիւնը: Հակառակորդների գլուխն է անցած Deutsche Zeitung-ի ծերունի և նշանաւոր խմբագիր Ֆրիդրիխ Լանգէն: Սակայն յիշեալ վիճակի 188 պատարը խնդրամատոյց են եղել կոնսիստորիային չտեղափոխել իրենց սիրելի հովուին:

— Մի այդպիսի երևոյթ է և Պաստոր Վայնգարդի գէպքը. Աբարաու-ն արգէն ուրիշ անգամ առիթ է ունեցել հաղորդելու, որ նա զրկուել է իւր քահանայական պաշտօնից՝ նորա հրատարակած քարոզների մէջ մի քանի դաւանաբանական կէտեր խիստ պահպանողական հոգևոր վարչութեան գուր չգալու պատճառով:

Այժմ նորա հրաժարեցման դէպքը մեծ յուզում է յառաջ բերել այն շրջանում, ուր գործում էր Պաստոր Վայնգարդը: Անցեալ մարտին արգէն Օսնաբրիւկի բնակիչներից 9134 հոգու ստորագրութեամբ մի խնդրք էր ուղարկուած կոնսիստորիային Վայնգարդին իւր պաշտօնի մէջ պա-

հելու համար: Սակայն Պոնսիստորիան նոյեմբերի 9-ին զրկել էր յիշեալ պաստորին իւր պաշտօնից առանց զիջանելու խնդրամատոյցների թախանձանաց: Այժմ նոյն քաղաքից մի խնդրագիր 11 հազար հոգու ստորագրութեամբ ուղարկուած է յանուն կայսեր ներումն շնորհելու իրենց սիրելի պաստորին և թոյլ տալու, որ դարձեալ շարունակէ իւր քահանայական պաշտօնը: Փոքրիկ քաղաքի յուզումը ցոյց է տալիս, որ հրաժարեցրած քահանան կարողացել է մեծ համակրութիւն ձեռք բերել իւր կենդանի քարոզներով:

— Համբուրգ մեծ քաղաքը, որպէս Գերմանիայի վաճառաշահ կեդրոններից մէկը՝ յայտնի է մեծ քաղաքներին յատուկ իւր բարոյական թերութիւններով. Այդպիսի մի ազնու երեւոյթի համար որոշել են քաղաքի բոլոր պաստորները միաձայն հաւանութեամբ ծննդեան տօններից առաջ քարոզի ժամանակ հետեւեալ յորդորը կարդալ իրենց ունինդիւններին: «Ծննդանալով ծննդեան տօնի արժանաւորութիւնն ու լըջութիւնը պահպանել, Համբուրգի պաստորները պարտք են համարում իրենց համայնքներին հետեւեալ սրտադին խնդիրն ուղղել: Ծննդեան առթիւ կազմուած Տօնավաճառները մատամբ եղծուել և այնպիսի զուարճութիւններն են փոխարկուել, որ ժողովրդի՝ մանաւանդ զեռահաս սեռի՝ ամեն մի բարեկամին և Քրիստոնեայի արխութեամբ կարող է լցնել: Տօնավաճառները արատաւորում են ականատեսներին երևակայութիւնը և սպառնում են ապականել մարդու սիրտը: Արքաւորական է լուրջ մատճող անձնաւորութեանց բարոյական զգացման համար այն ամենը, ինչ որ կատարուած է այնտեղ: Մեր ժողովրդի կեանքի անարատութեան նախանձախնդրութեամբ լցուած, պարտք ենք համարում խմբովին մեր ձայնը բարձրացնել այս աղեղ սովորութեան դէմ: Մենք յորդորում ենք ամենքին անտարբեր չմնալ բարոյական ծանր վտանգների առաջ, խնդրում ենք յատկապէս երեխաներին դայթակղութեան պատճառ չդառնալ և հետու պահել նրանց այն ամենից, ինչ որ նրանց մատաղ հոգուն վնասել կարող է: Զպէտք է մոռանալ Ս. Գրքի խօսքը «Զի զոր ինչ սերմանէ մարդ զնոյն և հնձնացէ»*: Կմաղթէինք, որ այդպիսի զուարճութիւններն տեղ քրիստ. բնական կեանքի ճշմարիտ ուրախութիւնները բռնէին: Կմաղթէինք, որ ամեն ոք ճշմարիտ զուարճութիւնը բարեկործութեան, օգնութեան և ուրիշին ոպասաւորելու մէջ գտնէր, որի համար շատ առիթ է տալիս այս ձմեռուայ եղանակը և ծննդեան տօնը: Թող Տիրոջ օրհնութիւնը մուտք գործէ մեր սրտի և բնասանաց մէջ, որ-

պէս զի ուրախ և շնորհաւատ ծնունդ վայելել կարողանանք»:

Համնովերի նահանգի (նախկին Թադաւորու-թեան) պատմութեան պատմութիւնը 1893 — 1898 թ. Հաննովերի կոնսիստորիայի հրատարակած տեղեկութիւնների համաձայն՝ հինգ տարուայ ընթացքում 42 պատուիր դէմ 45 անգամ դատ է սկսուած կառավարչական տեսակէտով: 45 դէպքից երեքը դատապարտութեան չէ ենթարկուել՝ մէկը դատապարտուելի հոգեկան հիւանդութեան պատճառով, իսկ երկուսի համար բուժական ժամանակ քանակութիւնը 45 համար: Երկու հոգի խիստ բանտարկելութեան (Zuchthaus) են ենթարկուել երգումնադանցութեան և անբարոյականութեան համար: Պաշտօնին աւանդական վարմունքի համար 8 դէպք է պատահել, պարտադանցութեան համար 19 (որոնցից 12-ը քաղաքական պարտադանցութեան մէջ են մեղադրուում), միկը իշխանաւորի դէմ ցոյց տուած անհնազանդութեան համար, երկը ընտանեկան խռովայոյց յարաբերութեան համար, մէկը գաղելու համար, արեցոյրեան համար երկուսը և անբարոյականութեան համար վեց:

Այս դէպքերից խառն ու միկը դատարանի վճռի համաձայն յանգիմանութիւն են ստացել, սուղանքի է ենթարկուել մի հոգի, պատժի երկ, պաշտօնից զրկուել են վեց հոգի, քահանայական կոչումից զրկուել են երկու հոգի, դատաւարութիւնից առաջ պաշտօնից հրաժարական են խընդրել և ստացել եօր հոգի:

Զեղծումների համար շնչին թիւ է 42-ը Հաննովերի նաման մի տէրութեան մէջ, այն էլ հինգ տարուայ ընթացքում, եթէ համեմատելու լինինք մեր քահանաների զեղծումների հետ: Մեր քահանաների մեծ զեղծումներն՝ առանց հիմնական փոփոխութեան—գիտութեան և կրթութեան—անկարելի է արմատախել անել: Այդպիսի զեղծումներից մէկն է անշարժականների պատկը, որ յաճախ կատարում են մեր քահանաները և որի համար յանգիմանութիւն է ստանում Հոգեւոր Տիրոջ կոնգրակով Հուշու կոնսիստորիան: Տես, Թ. 1471 կոնգրակի քաղուածքը:

—Հաննովերի նահանգի բոլոր եկեղեցիներում ժամ գնացողների թիւը միջին առմամբ 6 տարուայ ընթացքում հետեւեալն է եղել. տոներին 22,70/0, սուրբական կիրակիներին 13,60/0, ծննդեան տոնին 58,90/0, արական 27,50/0, իգական 31,40/0: Հետաքրքրական է իմանալ, թէ մեր չկրթութեամբ դասի քանի տոկոսն է եկեղեցի գնում, չհաշուելով եկեղեցիների բակում թափառողներին:

—Հաննով. եկեղեցական կիրականորեայ թերթերից և Հաննովերի կիրականորեայ թերթը:

40,000 բաժանորդ ունի, Ստադեր քաղաքինը 9000, արեւելեան Ֆրեդրայինը 5000, իսկ Sonntagshote-կիրականորեայ սուրհանդակը, որ նոր է հիմնուած, 4000 բաժանորդ:

—Գունուարից Բերլինում մի նոր ամսաթերթ է հրատարակում Die Jugendfürsorge—պատանիների խնամաստարութիւն—անունով: Թերթի նպատակը պէտք է լինի ծառայել զեռահաս պատանիների, մանուանդ որբերի, աղքատների, ժողովրդական դպրոցաւարտ պատանիներին խնամատարութեան գործին, Ահա մի նպատակ, որ քրիստոնէական եկեղեցու հոգաժութեան առարկայ է եղել նորա հիմնարկութեան օրերից: Այս տեսակէտով ամենայն շնորհակալութեան և քաջալերութեան արժանի է Կ. Պօլսոյ Հայոց Սրբազան Պատրիարքի ջանքը թշուառ որբերի համար:

Անգլիա.

— Բիսպսիայի գերմանական պատմութիւնի ռարեկան ժողովրդաւարութեան անցեալ հոկտ. 30 — նոյեմբ. 4-ը Նիւկասթլում: Ժողովի նպատակն է պանդուխտ պատուիրների գաղափարների փոխանակութեամբ և անձնական փորձառութեանց հաղորդակցութեամբ կապել միմեանց հետ: Սորա վերայ աւելացաւ այս տարի և մի ուրիշ նպատակ. ժողովը միջոցներ պէտք է գտնէ բուն հայրենիքի եկեղեցիների հետ աւելի սերտ յարաբերութիւն կապելու: Հառ խրատական են մեզ համար օտար եկեղեցիների մէջ հանդէս եկած այսպիսի երեւոյթները, որովհետեւ Հայաստանեայց եկեղեցու հօտը ցրուած է աշխարհի զանազան կողմերը, ուրեմն և ուրիշներից միջոցներ պէտք է սովորենք հեռուոր հաւատակից եղբայրներին Մայր Աթոռի հետ կապելու համար: Ի միջի այլոց յիշեալ ժողովը մէջ դատախօսութիւններ են եղել հետեւեալ նիւթերի վերայ. ա) Նիւկասթլի Ազգայնապատ պատուիր խօսեց Հերբերտ Սպենսերի փիլիսոփայութեան բարոյական գիտակցութեան մասին: Դատախօսը բացատրեց թէ ինչպիսի յարաբերութիւն ունի ներկայ ընա-փիլիսոփայութիւնը բարոյականութեան ուսումնասիրութեան և հոգեբանութեան վերաբերութեամբ: Երկրորդ դատախօսութիւնը բացատրում էր կրօնական բարեփոխութեան (Reformation) յառաջ բերած բարիքը եկեղեցու, գիտութեան և պետական կեանքի համար, երրորդ՝ Հանովից բաժանուելու շարժումը Աւստրիայում և հակակաթոլիկութիւնը Ֆրանսիայում, Չարտրը՝ Հոռլանդիայի ազատ եկեղեցու ծագումը և պատմութիւնը, Հինգերորդ՝ Յիսուսի անձնավորութիւնը որպէս հիմք անձնական հաւատի և Ալբրեխտ Բիշոփի գիտական ուղղութեան նկարագրութիւնը: Վերջին դատախօսութիւնը մեծ ոգևո-

թուփին յառաջ բերեց ունենդիրների մէջ. Գա-
սախօսութիւններեց յետոյ պատարներէ մէջ
գիտնական, կենդանի վիճաբանութիւններ էին
տեղի ունենում որպէս մաքերի փոխանակութեան
լաւագոյն շարժառիթ: Ժողովը երկու օր է տե-
ւել, և 12 պատարի մէջ 300 մ. նուէր է հա-
ւաքուել յօգուտ Աւստրիայում ցրուած բողո-
քական հաւատակիցներէ:

Ամերիկա.

— Հիւս. Ամերիկայի լուսնականների ընդհ. խոր-
հույր: Այս եկեղեցին 9 զանազան ժողովներից
է բաղկացած. բոլորի համախմբումը կոչուած է
ընդհանուր ժողով: Անցեալ հոկտեմբերին Չի-
կագոյում գումարուեցաւ այս լուծերական եկե-
ղեցու ընդհ. ժողովը նախագահութեամբ պատ-
ար Մոլդենհուկի: Այս եկեղեցին բաղկացած է
զանազան ազգութիւններից, իւրաքանչիւր ազգ-
իւր լեզուն է գործածում և իւր ժողովն (Synode)
ունի: Նա բաղկացած է 2029 համայնքներից
1233 պատարներով:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Ս. Հայրապետի Սրբատառ Կոնդակից, որ
քաղաւածօրէն հրատարակում է տոյն համարի
սկզբում, մեր ընթերցողները կտեղեկանան
արդէն «Արարատ»-ի վերաբերութեամբ կատա-
րուած փոփոխութեան մասին, Հոգեւոր Տէրը
զինանելով Արժ. Տէր Կարապետ վարդապետի
թախանձանաց, հաճեցաւ ընդունել նորա
հրաժարականը «Արարատ»-ի խմբագրութիւ-
նից: Մ. Աթոռի ժառանգաւորաց Ճեմարա-
նի Տեսչութիւնը այնքան ծանր եւ քազմա-
զբաղ պաշտօն էր, որ Հ. Կարապետը ստի-
պուած էր հրաժարուել խմբագրութիւնից,
իւր ուժերը աւելի ազատ կերպով Ճեմարա-
նի քարոյական եւ ուսումնական զարգացման
նուիրելու համար:

Այս գործն այժմ Հոգեւոր Տիրոջ քարծր

հրամանով յանձնուած է մեր նուաստութեան:
Ընդունուած սովորութեան հարկը վճարելով
պարտք ենք համարում յայտնել, թէ խրմ-
քագրի փոփոխութիւնը առանձին Նշանակու-
թիւն չունի «Արարատ»-ի ուղղութեան վերա-
բերութեամբ: «Արարատ»-ը միայն մի
նշանակութեամբ է ծառայել: Եթէ պատահել
էր, որ «Արարատ»-ը ծառայէր միայն
Հայրապետական Աթոռի պաշտօնական թեր-
թըն է, Ս. Էջմիածնի միաբանութեան քե-
րանը, Հայաստանեայց Եկեղեցու միակ կրօ-
նական-գիտնական թերթը, որի Տէրը Հայոց
Հայրապետն է: Ուրեմն ով եւ լինի նորա
խմբագիրը պէտք է աշխատէ քրիստոնէա-
կան-աւետարանական ծմարտութիւններ սեր-
մանել ժողովրդի մէջ եւ ամուր կապելով
միացնել Հայոց Հայրապետական Աթոռի հետ:
«Արարատ»-ը արձանագրելով օտար եկեղե-
ցիների յառաջադիմութիւնները խթան պէտք է
լինի հետեւելու նոցա կրօնական-յառաջադի-
մական լաւագոյն շարժմանց: Իսկ գիտնական
քաժնով: Տ. Նախարարի հաստատած ծրագրի
համաձայն՝ նուիրուած պէտք է լինի գլխա-
ւորապէս մեր եկեղեցական պատմութեան,
մատենագրութեան, հնախօսութեան կամ
արուեստի, եւ ընդհանրապէս եկեղեցական
քաղաքակրթութեան ուսումնասիրութեան:
Այս իմաստով էլ Ն. Սրբութեան Կոնդակը հրա-
հանգներ է տալիս մեր նուաստութեան գործը
դիրացնելու նպատակով: Ուրեմն փոխում է
խմբագրի անձնաւորութիւնը եւ ոչ «Արա-
րատ»-ը. կաւելացնենք նաեւ, որ այդ փոփո-
խութիւնը կատարում է ոչ յօգուտ թերթի:
Մեր սիրելի միաբանակիցը՝ Տ. Կարապետ
վարդապետ, եթէ քաւականաչափ ժամանակ
ունենար «Արարատ»-ը խմբագրելու, հաւատա-
ցած ենք, որ թերթի զարգացումը անընդհատ
յառաջադիմութեան մէջ կլինէր: Բայց օրը
միայն 24 ժամ ունի, որի կէսը մօտաւորապէս
հանգստեան եւ աննդեան պէտք է նուիրել:
Քարոյական պարտքը թելադրում է միգ խոս-
տովանել, որ եթէ այսօր «Արարատ»-ը կրօնա-
կան եւ գիտական տեսակէտով՝ որպէս երո-
պական ամուսկիր մեր ձեռքն է անցնում,
գլխաւորապէս պարտական ենք նախկին
խմբագրի անդու աշխատանաց: